ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 09.03.2016թ. ԹԻՎ151-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

27 մարտի 2017
ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ

Ս. Իսունց — Ընդհանուր բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ

Կ. Հակոբյան — գլխավոր հաշվապահ

Հ. Մինասյան — ՏՏԾ ՏՏԱ կենտրոնի ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Կարապետյան

Օրակարգ

1. ՀԱՆ(1)-17-ԾՀԾՁԲ-15/6 ծածկագրով ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.
2.Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Հայտարարվում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:
4.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի նախահաշվային գինը՝ 6 000 000 ՀՀ դրամ:

Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և գտնվելու հասցեն.
<<ԼԻՆԿ>> ՍՊԸ, հասցե՝ ՀՀ ք. Երևան 0051, Կոմիտասի 49

Արձանագրվեց, որ <<ԼԻՆԿ>> ՍՊ ընկերության կողմից հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված էր համապատասխան սահմանված կարգին:

<<ԼԻՆԿ>> ՍՊԸ կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում էին հրավերով սահմանված վավերապայմաններին:

Հրապարակվեց ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝

Ամսական ֆիքսված սպասարկման ծառայությունների կատարման համար – 135 000 ՀՀ դրամ:

Ամսական 4 ժամը գերազանցող յուրաքանչյուր մեկ ժամի սպասարկման ծառայություններ – 24 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի 7.2.5 կետի 1) ենթակետի մասնակցի հետ վարվեցին բանակցություններ առաջարկված գնի նվազեցման շուրջ, որի արդյունքում մասնակիցը նվազեցրեց ամսական ֆիքսված սպասարկման ծառայությունների կատարման համար գնային առաջարկը – 120 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշեց

1.Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԼԻՆԿ>> ՍՊ ընկերությանը և ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը՝ նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 04.04.2017թ. ժամը 11.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ս. Իսունց		**Հանձնաժողովի նախագահ**
Կ. Հակոբյան		**Հանձնաժողովի անդամ**
Հ. Մինասյան		**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան		**Հանձնաժողովի քարտուղար**